ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ն 1 – Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 07.09.2017թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/
2. Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Աշտարակ քաղաքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ գյուղատնտեսական նշանակության հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
7. 514-039 ծածկագրով 0.2213հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
9. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
10. Ըստ դատավճռի քաղաքացու սեփականության իրավունքը ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
11. Աշտարակ համայնքի ավագանու 25.07.2017թ. N 5-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
12. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
13. Աշտարակ համայնքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
14. Աշտարակ համայնքի ավագանու 08.10.2015թ. թիվ 1-Ա, 21.12.2015թ. թիվ 8-Ա, 28.12.2015թ. թիվ 1-Ա, 13.12.2016թ. թիվ 8-Ա որոշումների քվեարկությունները մասնակի անվավեր ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
15. Աշտարակ համայնքի ավագանու 25.04.2008թ. թիվ 12/1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
16. Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 1-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ.Վահանյան/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/

N 2 – Ն ՈՐՈՇՈՒՄ

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2017թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:

2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:

3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:

4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:

5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:

6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:

7. <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	*Ֆոնդային բյուջե*	*Ընդամենը*
Եկամտային մաս	521561.4	0	521561.4
Ծախսային մաս	522305.6	32944.3	539249.9
Դեֆիցիտ	-744.2	-32944.3	-33688.5
Պահուստային ֆոնդ	16000.0	0	16000.0

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 1*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ԱՋԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/

N 3 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով 2017թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 5-րդ կետերի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից, ըստ անհրաժեշտության, ուղղելու ֆոնդային բյուջե՝ տարբեր բնագավառներում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 1*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԱՋԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ	
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/

N 4 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով որոշ ֆիզիկական անձանց դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
07.09.2017թ. N 4-Ա որոշմամբ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	*ՀՈՂԻ ՀԱՐԿ*	*ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ*
35 162,00	7 035,00	Գագիկ Ավետիքի Ազիզյան
59 200,00	10 338,00	Արամյան Սեյրան
	27 250,00	Մովսիսյան Սիլվա
	24 604,00	Յորդանյան Շոթա
21 966,00		Նինա Գևորգի Հովհաննիսյան
	17 810,00	Սիրարփի Հարությունյան
13 998,00	3 040,00	Խորեն Թահմազյան
	9 564,00	Հովհաննիսյան Սամվել
22 172,00		Ենոքյան Սուրեն
3 700,00	4 952,00	Կարինյան Հովհաննես
13 673,00		Գալստյան Վահան
25 314,00	12 477,00	Ալֆրեդ Էլոյան
17 038,00		Արթուր Կարապետյան
20 000,00		Աբովյան Սիլվա
77 941,00		Կարեն Սուքիասյան
	95 000,00	Թամարա Հովհաննիսյան
12 042,00		Սերյոժա Գասպարյան
39 820,00		Մովսիսյան Ավագ
362 026,00	***212 070,00***	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ն 5 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1],76-80 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. Ն 286 որոշման 46.2 կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրել և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՋԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
07.09.2017թ. N 5-Ն որոշմամբ

Հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	1քմ-ի տարեկան վճարի մեկնարկային գինը դրամ	Սահմանափակումներ
1	հողատարածք	Երևանյան փողոց N49 տան հարևանությամբ	088-025-ից	47	բնակավայրերի		ընդհանուր օգտագործման	200	
2	հողատարածք	Քասախի կիրճ	073-007-ից	4834	բնակավայրերի		այլ	50	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ն 6 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66, 67-70 հոդվածների, ՀՀ կառավարության 26.05.2016թ. N550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Աշտարակ քաղաքի 859-212 ծածկագրից 0,01136հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից ընդլայնվող 02-001-0859-0510 ծածկագրով հողամասի սեփականատեր <ՍՈՒԼԹԱՆ ԳԱՐԴԵՆ> ՍՊԸ-ին:
3. Աշտարակ քաղաքի 859-212 ծածկագրից 0,1005հա գյուղատնտեսական նշանակության /0,04684հա վարելահող և 0,05366հա այլ/ հողամասը ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող 02-001-0859-0511 ծածկագրով հողամասի սեփականատեր <ԱԲՈՒ ԴԱԲԻ ԳԱՐԴԵՆ> ՍՊԸ-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
07.09.2017թ. N 6-Ն որոշմամբ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/	Սահմանափակումներ
1	հողատարածք	Աշտարակ տեղամաս	859-221-ից	1,01205 հա 0,04815հա 0,0348հա	գյուղ.	այլ վարելահող պտղատու այգի /հնդավոր/	---	100	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

514-039 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,2213ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

N 7 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 514-039 ծածկագրով 0,2213հա գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխանցվել է որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն քաղաքացու խնդրանքով և Աշտարակի քաղաքապետի 21.05.1998թ. թիվ 30 որոշմամբ վերը նշված հողամասը հետ է վերցվել քաղաքացուց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ԱԳ ԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 514-039 ծածկագրով 0,2213հա գյուղատնտեսական նշանակության հողամասը /վարելահող/ ճանաչել համայնքային սեփականություն:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

N 8 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
07.09.2017թ. N 8-Ն որոշմամբ

Հողերի աճուրդ-վաճառք

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/	Սահմանափակումներ
1	հողատարածք	Տիգրան Մեծի փողոց /գերեզմանոցի հարևանությամբ/	135-009-ից	100	բնակավայրերի		հասարակական	60	
2	հողատարածք	Քասախի կիրճ	073-007-ից	1831	բնակավայրերի		այլ	50	
3	հողատարածք	Քասախի կիրճ	073-007-ից	2286	բնակավայրերի		այլ	50	
4	հողատարածք	Քասախի կիրճ	073-007-ից	792	բնակավայրերի		այլ	50	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ն 9 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 859-210 ծածկագրից 0,0107հա, 859-211-ից՝ 0,0348հա, 859-213, 859-214 և 859-215 ծածկագրերից 0,09495հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը փոխանցվել են որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 859-210 ծածկագրից 0,0107հա պտղատու այգին /հնդավոր/, 859-211-ից՝ 0,0348հա պտղատու այգին /հնդավոր/, 859-213, 859-214 և 859-215 ծածկագրերից 0,09495հա ընդհանուր մակերեսով վարելահողերը ճանաչել համայնքային սեփականություն:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԸՍՏ ԴԱՏԱՎՃՌԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ն 10 -Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Սերյոժա Կարապետյանի 03.08.2017թ. N968 դիմումը և ՀՀ Աշտարակի Շրջժողդատարանի 29.11.1991թ. վճիռը՝ Սերյոժա Կարապետյանին քաղաքի կառուցապատման տարածքից համապատասխան չափի հողակտոր հատկացնելու մասին, նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջարկվող 420-007 ծածկագրով 600քմ տնամերձ հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջերով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Ճանաչել Սերյոժա Հովհաննեսի Կարապետյանի սեփականության իրավունքը Աշտարակ քաղաքի <Արա-2> թաղամաս, 15-րդ փողոց, N14 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 420-007/ 600քմ տնամերձ հողամասի նկատմամբ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.07.2017Թ. N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

N 11 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Համայնքի ավագանու 25.07.2017թ. N 5-Ա որոշման մեջ ի հայտ եկած վրիպակը վերացնելու նպատակով, ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 25.07.2017թ. N 5-Ա որոշման մեջ՝

- Դանիել Հունանյանին կառուցապատման իրավունքով տրամադրվող 9քմ հողամասը փոխարինել 14քմ հողամասով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՋԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	

Քվեարկությանը չի մասնակցել Ա. Հունանյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 12 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին> >Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 9 *ԴԵՄ -1* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ	ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ	
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված

Հաստատված է համայնքի ավագանու
07.09.2017թ. N 12-Ա որոշմամբ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (այսուհետ՝ համայնք) 2017 թվականի կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները: Համայնքի կամավոր խնդիրները սահմանվում են՝ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը,

2) համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, մշակութային կյանքի խթանումը,

3) բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացում,

4) համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը,

5) զոհված զինծառայողների, զինծառայողների պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը,

3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառվարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) աջակցություն են ցուցաբերում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին,

2) աջակցություն են ցուցաբերում համայնքի մշակութային հաստատություններին՝ մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներին մասնակցելու իրականացմանը,

3) միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,

4) աջակցություն են ցուցաբերում համայնքի մարզիկներին և մարզական թիմերին՝ ներհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև միջհամայնքային, մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերին նրանց մասնակցության ուղղությամբ,

5) աջակցություն են ցուցաբերում բարձրագույն, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի վճարման կազմակերպմանը

6) նպաստում են համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության կազմակերպմանը:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով կարող են նախատեսվել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 50 տոկոսը:

5. Կամավոր խնդիների լուծման համար համար ֆինանսական միջոցների հատկացումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական հատկացումներին համապատասխան, ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները:

7. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագնու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը, առկայության դեպքում նաև՝ անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման համար իրականացման վերաբերյալ դիմում, որում նշում է դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և այլն: Համայնքի ղեկավարը դիումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

ա. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայն լինելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում այդ մասին տեղյակ է պահում նախաձեռնող կողմին և կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման նախագիծ է ներակայացնում ավագանու քննարկմանը:

բ. Կամավոր խնդրի լուծման իրկանացմանը չհամաձայնվելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները:

9. Համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքերում քննարկում է կամավոր խնդրի լուծման հարցը համայնքի ղեկավարի կամ համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծված մարմնի եզրակացության դեպքում և ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

10. Համայնքի ղեկավարը զոհված զինծառայողների, զինծառայողների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ կարող է ստեղծել հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք՝ իրենց համաձայնությամբ:

11. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

12. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

ա. Սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտքերի վերաբերյալ տեղեկանք,

բ. Ընտանիքի եկամտի չափը ընտանիքի անդամի հաշվով երեսուն հազար դրամը չգերազանցելը,

գ. Սոցիալապես անապահով ընտանիք հանդիսանալու վերաբերյալ սոցիալական օգնության տրամադրման գործող հանձնաժողովի /առկայության դեպքում/ դրական եզրակացությունը

13. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության չափը սահմանվում է 30 000 ՀՀ դրամ, բացառիկ դեպքերում՝ համայնքի սոցիալապես անապահով

ընտանիքի անդամի հուղարկավորության կազմակերպման համար համայնքի ղեկավարի որոշմամբ կարող է տրամադրվել մինչև 200 000 ՀՀ դրամ օգնություն: Խիստ անհրաժեշտության դեպքում՝ հնարավոր է սոցիալական աջակցություն տրամադրել նաև համայնքի բնակչության սոցիալական այլ խմբերի ներկայացուցիչներին:

14. Սոցիալապես անապահով ընտանիքների, բարձր առաջադիմությամբ ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի հատկացումը կարող է իրականացվել բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում:

15. Սույն կարգով սահմանված կամավոր խնդիրները սպառիչ չեն և համայնքի ավագանու կողմից կարող են սահմանվել կամավոր այլ խնդիրներ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 13 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված

Հաստատված է համայնքի ավագանու
07.09.2017թ. N 13-Ա որոշմամբ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

I. Ընդհանուր դրույթներ

1. Աշտարակ համայնքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում են Աշտարակ համայնքի (այսուհետ՝ համայնք) վարչական տարածքում ընտանի կենդանիներին հաշվառելու, պահելու հետ կապված հարաբերությունները, և տարածվում են համայնքի վարչական տարածքում գտնվող ընտանի կենդանիներ տիրապետող (պահող) ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա։

2. Կանոնները չեն տարածվում գիտական, գիտահետազոտական, բժշկական, ինչպես նաև ծառայողական նպատակներով ընտանի կենդանիներին օգտագործող և պահող համապատասխան թույլտվություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա։

3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ընտանի կենդանի (այսուհետ՝ կենդանի)՝ մարդու կողմից ընտելացված կենդանի,

2) ընտանի կենդանի տիրապետող (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում հսկողության և(կամ) խնամքի ներքո գտնվում է կենդանին,

II. Տիրապետողի իրավունքները և պարտականությունները

4. *Տիրապետողն իրավունք ունի*՝

1) հիմնել կենդանիների տիրապետողների կազմակերպություն և (կամ) անդամակցել դրան,

2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապված հարցերի վերաբերյալ,

3) սույն կանոններով նախատեսված այլ իրավունքներ:

5. Տիրապետողը պարտավոր է՝

1) Սույն Կանոններին համապատասխան 15-օրյա ժամկետում իրականացնել նոր ձեռք բերված կենդանու հաշվառումը,

2) կենդանուն պահել դրա կենսաբանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել սննդի, ջրի, քնի, շարժման, բնական ակտիվության նկատմամբ նրանց պահանջները,

3) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները, այդ թվում՝

իրականացնել կենդանու տարեկան պատվաստումը կատաղության դեմ,

4) անհապաղ անասնաբուժական կամ առողջապահության կազմակերպություններին հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու առողջությանն վնաս հասցնելու մասին՝ կենդանուն տեղափոխելով մոտակա անասնաբուժական կազմակերպություն՝ զննման և կարանտինային հսկողություն իրականացնելու համար,

5) անհապաղ անասնաբուժական կազմակերպությանը հայտնել կենդանու կատաղության հիվանդության կասկածի մասին և մինչ անասնաբույժ–մասնագետի ժամանումը մեկուսացնել կենդանուն,

6) կենդանու հիվանդությունների կանխման նպատակով իրականացնել սանիտարահիգիենիկ միջոցառումներ,

7) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման տարածքների, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի, մայթերի, փողոցների, սիզամարգերի, ինչպես նաև հանգստյան կանաչ գոտիների աղտոտումը,

8) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում այն փոխանցել այլ անձի։ Արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության,

9) կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

10) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման դուրս հանելը,

III. Կենդանիների հաշվառումը

6. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու համար։

7. Կենդանիներն հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից։

8. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով, ինչպես նաև կենդանաբանական այգիներում պահվող կենդանիները։

9. Հաշվառումն իրականացնում է համայնքապետարանը՝ կենդանիների քանակի և դրանց կուտակումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների հավաքագրման միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով։

10. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման պահից 15-օրյա ժամկետում։

11. Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում։

12. Գրանցման գրքում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը,

2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության հասցեն, անձնագրի տվյալները,

3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է),

4) տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,

5) այլ տեղեկություններ։

IV.Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

13. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը։

14. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմաններ։

15. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է։

16. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում։ Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների։

17. Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը։

18. Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝

1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը։ Մարդկանց և ուրիշ կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ։ Ագրեսիվ շների ցանկը սահմանում է համայնքի ղեկավարը։

2) ագրեսիվ շանը պահել դնչկալով՝ մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում։

Բնակելի թաղամասերում ագրեսիվ շների զբոսանքը թույլատրվում է իրականացնել միայն դնչկալի և կապի առկայության դեպքում։

Հասարակական վայրերում տիրապետողը պետք է ագրեսիվ շանը պահի կարճ կապի վրա և դնչկալով։

19. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա։

20. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումն կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները։

21. Շներ տիրապետողներն իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

22. Կենդանիների վաճառքը թույլատրվում է իրականացնել մասնագիտացված խանութներում, կենդանիների շուկաներում կամ այդ նպատակի համար հարմարեցված հատուկ առանձնացված վայրերում:

23. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:

24. Տիրապետողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Շները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարացված սարքերում:

25. Արգելվում է՝

1) կենդանուն գրգռել մարդկանց և կենդանիների վրա,

2) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել,

3) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցներում,

4) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն,

5) շանը զբոսանքի տանելը մանկական հրապարակներում, առողջապահական, կրթական, մշակույթի, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում,

6) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը:

7) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը, բացառությամբ կենդանիների ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

8) կենդանու ազատ կամ կապված արոտն դրա համար չհատկացված վայրերում (փողոց, զբոսայգի, պուրակ, տնամերձ տարածք և այլն):

26. Տիրապետողները պարտավոր են հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը, թույլ չտալ շրջակա միջավայրի աղտոտումը կենդանիների կենսագործունեության արդյունքներով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.10.2015թ. ԹԻՎ 1-Ա, 21.12.2015թ. ԹԻՎ 8-Ա, 28.12.2015թ. ԹԻՎ 1-Ա, 13.12.2016թ. ԹԻՎ 8-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 14 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 08.10.2015թ. թիվ 1-Ա որոշման մեջ Վահագն Մկրտչյանի քվեարկությունը ճանաչել անվավեր:
2. Աշտարակ համայնքի ավագանու 21.12.2015թ. թիվ 8-Ա որոշման մեջ Տիգրան Գալստյանի, Վահագն Մկրտչյանի քվեարկությունները ճանաչել անվավեր:
3. Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2015թ. թիվ 1-Ա որոշման մեջ Նորիկ Անդրեասյանի, Տիգրան Գալստյանի քվեարկությունները ճանաչել անվավեր:
4. Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 8-Ա որոշման մեջ Նավասարդ Պետրոսյանի, Աշոտ Հունանյանի քվեարկությունները ճանաչել անվավեր:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 6 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

Քվեարկությանը չեն մասնակցել Ն. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Հունանյանը, Տ. Գալստյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.04.2008թ. ԹԻՎ 12/1-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 15 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետի ա) ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Աշտարակ համայնքի ավագանու 25.04.2008թ. թիվ 12/1-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՋԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07-ը սեպտեմբերի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016թ. ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 11

/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/

N 16 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Լրացում կատարել Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 1-Ա որոշման 1-ին կետում՝ ավելացնելով <<Մարինե Սարդարյան-աշխատանքային ծավալների ավելացման և ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված - 20000 ՀՀ դրամ>> բառերը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ - 0* *ՉԵՌՆՊԱՀ – 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՋԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն